

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ 8/7.3-Լ

ք. Երևան

7 ապրիլի 2022 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌՈՒՍ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ (ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ) ՈՒ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ
(ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ) ԱՄԲԻՈՆՆԵՐԻ՝ ՄԻԱԶՈՒԼՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՊՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 49-րդ
կետի 2-րդ և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ
ենթակետերով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. առաջարկել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝
 - 1.1. ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի (բնագիտական ֆակուլտետների) ու ռուսաց լեզվի (հումանիտար ֆակուլտետների) ամբիոնների՝ միաձուլման եղանակով վերակազմակերպում Ռուսաց լեզվի ամբիոնի:
 - 1.2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ